

ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՎԵՅԱԺՈՂՈՎ

ՎՐԱՍՏԱՆԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Ե ՓՈԽՇԱՐԱՎԵՏ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԶԱՐԵՎԱՆՆԵՐԻ ԶԵՏ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՅԵՅՑ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՎԵՅԱԺՈՂՈՎԻ ՆՍՏԱՆԵՐԳԱՆԻՆ



Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին սեպտեմբերի 19-22-ին մասնակցեց Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովի 71-րդ նստաշրջանի աշխատանքին:

ԱՄՆ կատարած այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը ելույթ ունեցավ փախստականների եւ միգրանտների, ինստիտուցիոնալ արդյունավետության եւ բաց կառավարման գործընկերության թեմաներով անցկացված բարձր մակարդակի հանդիպումներում:

Վրաստանը ձգտում է ամրապնդել ՆԱՏՕ-ին ու Եվրամիությանը եւ, միաժամանակ, ցանկանում փոխադարձ հարաբերություններ գարգացնել իր տարածաշրջանի երկրների հետ: Այդ մասին հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին՝ ելույթ ունենալով ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի ընդհանուր քաղաքա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՇՎԵՑ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՉԱԿՄԱՆ 25-ԱՄՅԱԿԸ

Երեւանի Հանրապետության հրապարակում սեպտեմբերի 21-ին կայացավ Հայաստանի անկախության 25-ամյակին նվիրված ամենամշանակալի հրադարձությունը՝ տոնական զորահանդեսը: Միջոցառմանը հրավիրվածների թվում էր Վրաստանի պատվիրակությունը, որի կազմում էին երկրի խորհրդարանի պատգամավորներ Ռուսլան Պողոսյանը, Սամվել Պետրոսյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրդյանը:



Հայաստանի պաշտպանության նախարարի պաշտոնակատար Սեյրան Օհանյանն ստորաբաժանումներին շնորհավորեց Հայաստանի անկախության 25-ամյակի կապակցությամբ: Այնուհետեւ, նախարարը զեկուցեց Հայաստանի Ձինված ուժե-

րի զերագույն զխավոր հրամանատար, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին զորահանդեսի պատրաստության մասին, ինչից հետո տրվեց զորահանդեսի մեկնարկը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ ՍԵՐՃ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ



Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին շնորհավորել է Հայաստանի անկախության 25-ամյակի առթիվ եւ եղբայրական հայ ժողովրդին մաղթել խաղաղություն ու բարեկեցություն:



«Վրաստանի եւ Հայաստանի բարեկամությունը հիմնված է խորը պատմական ու մշակութային ավանդույթների վրա: Ես հավատում եմ, որ, ընդհանուր ջանքերով, մենք կկարողանանք հաղթահարել մեր երկրների առջեւ ծառայած դժվարությունները եւ ապագայում է՛լ ավելի խորացնել համագործակցությունը մեր ժողովուրդների բարեկեցության համար»,- նշված է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին ուղղված Գիորգի Մարգվելաշվիլու ուղերձում: Վրաց ժողովրդի անունից Գիորգի Մարգվելաշվիլին հատուկ հարգանք է հայտնել հայ ժողովրդին:

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը շնորհավորական ուղերձ է հղել Հայաստանի անկախության 25-ամյակի կապակցությամբ: Ուղերձում, մասնավորապես, ասված է.



- Ի սրտե շնորհավորում եմ ողջ հայ ժողովրդին Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձի կապակցությամբ: Մենք՝ հայերս, մեկն ենք այն փոքրաթիվ ժողո-

վուրդներից, որոնք ունեն պետություն: 25 տարի մենք պատվարում ենք (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԳԻՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԵՐԿՐԻ ՈՐԶ ՄԱՇՏԱՐՈՎ ԿԱՆՅԿԱՅՎԻ ՏԱՐԱՄԱՆԵՐԵՐԸ ԿԱՊՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՅԱՆՅՊ»

Սեպտեմբերի 16-ին, «Ռում» հյուրանոցում, անցկացվեց «Երկրի տարածքային կարգավորումը» նախագծի շնորհանդեսը: Շնորհանդեսին, որին մասնակցեցին կառավարության եւ բիզնես-սեկտորի ներկայացուցիչները, ելույթ ունեցավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նրա խոսքով, մինչեւ 2020 թվականը Վրաստանի կառավարությունը ծրագրում է կառուցել եւ վերանորոգել 1000 կմ երկա-

րության ճանապարհ: Ըստ վարչապետի, երկրի տարածքի կարգավորման նախագիծը ամենամասշտաբային բաղադրիչն է կա-

ռավարության չորս կետից կազմված ծրագրում: Այն նախատեսում է տրանսպորտային եւ էներգետիկ ենթակառուցվածքի, գյուղատնտեսության բարձրարժեք տարածաշրջանների, երկրի պաշտպանված տարածքների ու հանգստավայրերի զարգացում:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ



Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին շնորհավորական ուղերձ է հղել Կարեն Կարապետյանին՝ Հայաստանի վարչապետ նշանակվելու առիթով:

Ուղերձում նշված է. - Ձեր գերազանցություն.

Վրաստանի կառավարության եւ անձամբ իմ անունից թույլ տվեք սրտանց շնորհավորել Ձեզ՝ Հայաստանի վարչապետի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ ու հաջողություն մաղթել պետական գործունեության մեջ: Համոզված եմ, որ մեր համագործակցությունը

ու համատեղ ջանքերը Վրաստանի եւ Հայաստանի միջեւ առկա սերտ կապերի ու ավանդական բարիդրացիական հարաբերությունների հետագա խորացման հիմք կդառնան:

Ցանկանում եմ կրկին հավաստել խորին հարգանքս եւ մաղթել Ձեզ արդյունավետ գործունեություն վարչապետի պաշտոնում:



ՔՆՆԱՐԿՎԵՑ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Սեպտեմբերի 22-ին Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Չանելիձեն Նյու Յորքում, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 71-րդ նստաշրջանի շրջանակներում, հանդիպում ունեցավ Հայաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Հանդիպմանը Միխեիլ Չանելիձեն եւ Էդվարդ Նալբանդյանը անդրադարձան Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու՝ սեպտեմբերի 5-ին Հայաստան կատարած այցելության ընթացքում երկու երկրների ղեկավարների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացմանը, վրաց-հայկական օրակարգի բազմաթիվ հարցերի:



ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ ԱՌԱՋԻԿԱ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ԵՎ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ



Հանդիպման գլխավոր թեման առաջիկա խորհրդարանական ընտրություններն են ու երկրում նախընտրական


վիրակության անդամ, ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ հումանիտար հարցերի կոմիտեի նախագահ

Սեպտեմբերի 23-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ ԵԱԳԿ խորհրդարանական վեհաժողովի դիտորդական առաքելության ներկայացուցիչների հետ:

իրավիճակը: Կողմերը քննարկեցին նաեւ Վրաստանի բռնազավթված տարածաշրջաններում ստեղծված իրավիճակը:

Ինչպես նշեց պատվիրակության անդամ, ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ հումանիտար հարցերի կոմիտեի նախագահ

Խոսե Իգնասիո Սանչե Ամորին, ընտրական թեմայից բացի, քննարկվել են նաեւ վրաց-ռուսական հարաբերությունների եւ երկրի կայունությունն ապահովող այլ հարցեր: «Հանդիպմանը մենք քննարկեցինք ընտրությունների հետ կապված ողջ գործընթացը: Ներկա փուլում, բնականաբար, մենք չենք կարող կոնկրետ գնահատել այն, սպասում ենք ստուգման արդյունքներին»,- հայտարարեց նա:



ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ՊԵՏՊՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սեպտեմբերի 18-ին Ռուսաստանում անցկացվեցին Պետական դումայի ընտրությունները: Նախնական տվյալներով, «Եդինայա Ռոսիան» հավաքել է ձայների 54,28 տոկոսը, ՌԴ կոմկուսը 13,61 տոկոսով փոքր-ինչ գերազանցում է ՌԼԴԿ-ին, որն ունի 13,37 տոկոս: «Արդար Ռուսաստանը» հավաքել է ձայների 6,17 տոկոսը: Քվեարկության արդյունքները ներկայացված են ՌԴ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

Կուսակցական ցուցակներով, քվեարկության արդյունքներով ոչ մի այլ կուսակցություն չի հաղթահարում հինգ տոկոսի արգելքը:

Նախնական տվյալներով, ընտրողների մասնակցությունը կազմել է 47,91 տոկոս:

Պետդումայի ընտրություններն անցկացվել են խառը համակարգով՝ 225 պատգամավորներ ընտրվում էին կուսակցական ցուցակներով, 225-ը՝ միամանդատ ընտրատարածքներում:

ԱՄՆ

ԱՐԱՐԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՀԵՏՆՈՒՄ

Պայթյունը տեղի է ունեցել սեպտեմբերի 17-ին, Մանհեթենի կենտրոնում, Չելսի թաղամասում, որտեղ գտնվում են բազմաթիվ հանրաճանաչ ռեստորաններ, սրճարան-բարեր եւ խանութներ: Դրա հետեւանքով, տուժել է 29 մարդ, նրանք բոլորը դուրս են գրվել հիվանդանոցներից:

Ինչպես հայտարարել է Նյու Յորքի քաղաքապետ Քլի Դե Բլազիոյին, Մանհեթենում պայթյունի ենթարդյալ կազմակերպիչը Աֆղանստանից սերված, 28-ամյա Ահմադ Խան Ռահամին է:

Ներկայումս Ռահամինին փնտրում է ոստիկանությունը: Վերջին հասցեն, որտեղ նա ապրել է, գտնվում է Նյու Ջերսիի Մահանգի Էլիզաբեթ քաղաքում: Նշվում է, որ Ռահամին «գինված է ու շատ վտանգավոր»:

ՄԱԿ

ՏԱՐԵՍԿԶԲԻՑ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎՈՎ ԵՎՐՈՊԱ Ե ՎԱՍՍՆԵԼ ԾՈՒՐՁ 300 ՀԱՋԱՐ ՄԻԳՐԱՆՏ

Տարեսկզբից Միջերկրական ծովով եվրոպայի երկրներ է ժամանել շուրջ 300 հազար միգրանտ ու փախստական: Ընդ որում, ավելի քան 3,2 հազար մարդ զոհվել կամ անհետ կորել է ճանապարհին: Այդ մասին սեպտեմբերի 20-ին ժնեւում հայտնել է Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ):

Տարվա սկզբից մինչեւ սեպտեմբերի 18-ը ծովով եվրոպա է ժամանել 298 հազար 474 միգրանտ ու փախստական, նշվում է ՄՄԿ-ի տեղեկագրում: Ընդ որում, նրանց մեծ մասին ընդունել է Հունաստանը (165 հազար 409 մարդ), Իտալիա ժամանածների թիվը հասնում է 130 հազար 561-ի, 2 հազար 476 միգրանտ ու փախստական հասել է Իսպանիա, 28-ը՝ Կիպրոս:

Ըստ ՄՄԿ-ի գնահատումների, ճանապարհին զոհվածների եւ անհետ կորածների թիվն ընթացիկ տարում հասել է 3213-ի: Դրա հետ մեկտեղ, մահվան ամենից շատ դեպքեր են գրանցվել Հյուսիսային Աֆրիկայից Իտալիա երթուղում, Միջերկրական ծովի կենտրոնական մասում՝ 2766 հոգի: Թուրքիայից Հունաստան հասնելու փորձ կատարելիս՝ զոհվել է 386 մարդ, իսկ Հյուսիսային Աֆրիկայից Իսպանիա ճանապարհին՝ 61 մարդ:

ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՎԵՅՆԱԺՈՂՈՎ

ՎՐԱՍՏԱՆԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՓՈԽՇԱՐԱԿԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԱՐԳԱՑՆԵԼ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կան բանավեճի ընթացքում:

Նա հիշեցրել է, որ հուլիսին ուժի մեջ է մտել ԵՄ-ի հետ Ասոցիացիայի վերաբերյալ համաձայնագիրը, եւ այժմ երկիրն իր օրենսդրությունը համապատասխանեցնում է Եվրամիության պահանջներին: Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքով, Թբիլիսին նաեւ ձգտում է անդամակցել ՆԱՏՕ-ին եւ կարող է պարծենալ «ցանկացած այլ երկրի համեմատությամբ դաշինքի հետ առավել խորը եւ առավել ամբողջական գործընկերությամբ»:

- Վրաստանի արտաքին քաղաքականությունը նպատակամղված է մեր տարածաշրջանի եւ նրա սահմաններից դուրս երկրների հետ ուժեղ, փոխշահավետ հարաբերությունների զարգացմանը: Մեր ժողովրդի կողմից ընտրված ճանապարհը տանում է ավելի մեծ կայունության, անվտանգության, խաղաղության եւ մեր երկրի ու տարածաշրջանի բարգավաճման,- հավելեց Վրաստանի վարչապետը:

Այցի շրջանակներում, Գիորգի Կվիրիկաշվիլին անցկացրեց մի շարք երկկողմ հանդիպումներ: Մասնավորապես, Վրաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի ՄուՆի, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ենթոնի Բլինկենի, Գերմանիայի արտաքին գործերի դաշնային նախարար Ֆրանկ Վալտեր Շտայնմայերի, Բելգիայի վարչապետ Շարլ Միշելի, Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, Եվրահանձնաժողովի առաջին փոխնախագահ Ֆրանց Թիմերմանսի եւ Եվրահանձնաժողովի փոխնախագահ, արտաքին քաղաքականության ու անվտանգության քաղաքականության հարցերով Եվրամիության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի հետ:



պետը հանդիպում ունեցավ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի ՄուՆի, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ենթոնի Բլինկենի, Գերմանիայի արտաքին գործերի դաշնային նախարար Ֆրանկ Վալտեր Շտայնմայերի, Բելգիայի վարչապետ Շարլ Միշելի, Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, Եվրահանձնաժողովի առաջին փոխնախագահ Ֆրանց Թիմերմանսի եւ Եվրահանձնաժողովի փոխնախագահ, արտաքին քաղաքականության ու անվտանգության քաղաքականության հարցերով Եվրամիության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի հետ:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՔՆՆԱՐԿՎԵՑ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ



Հանդիպմանը կողմերը քննարկեցին բանկի կողմից աջակցվող նախագծերի կատարման ընթացքը, կարծիքներ փո

Սեպտեմբերի 20-ին Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խաղոլին հանդիպում ունեցավ Վրաստանում զարգացման Ասիական բանկի մշտական ներկայացուցիչ Էյչին Էլխան Քայլարի հետ:

խանակեցին ապագա համագործակցության վերաբերյալ ու ընդգծեցին բարեփոխումների շարունակման կարելու

իրականացվում են նշանակալի նախագծեր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան, ջրամատակարարումը, ճանապարհային ենթակառուցվածքը:

Առանձնակի նշանակալից է բանկի կողմից ֆինանսավորվող «Արելեք-Արել» ավտոմայրուղու Ռիկոթի ճանապարհահատվածի վերանորոգումը:

րությունը: Նշենք, որ, զարգացման Ասիական բանկի ֆինանսավորմամբ, Վրաստանում

ՀԱՅԱՍՏԱՆ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հել ու ամրապնդել ենք մեր անկախությունը, մենք պայքարել ենք, ունեցել ենք ե՛լ կորուստներ, ե՛լ ձեռքբերումներ, հաղթահարել ենք դժվարություններ, տոնել ենք հաղթանակներ, ապրել ու ապացուցել ենք, որ արժանի ենք այդ անկախությանը: Մեր պատմությունը փառապանծ

է: Մենք մեծ պատասխանատվություն ենք կրում՝ պահպանելու անկախության համար պայքարում դրսևորած վեհ ազգային ինքնագիտակցությունը, աչալրջորեն ու համախմբված ուժերով հզորացնելու եւ շենացնելու մեր պետությունը, է՛լ ավելի ամրապնդելու նրա միջազգային հեղինակությունը, որպեսզի կարողանանք պատշաճ պատաս

խան տալ մեր հայրենիքի դեմ ուղղված բոլոր ոտնձգություններին: Անկախ բոլոր դժվարությունների, մենք առաջ ենք շարժվում, եւ մեր քառորդ-դարյա անկախությունը մեզ թույլ է տալիս, որ մեր քայլերն օր-օրի է՛լ ավելի վստահ ու համարձակ դարձնենք: Ես վստահ եմ, որ ինչպես պատմության մեջ միշտ է եղել, մենք միասնական եւ քաջաբար

հաղթահարելու ենք մեր ազգի առջեւ ծառացող բոլոր խնչընդոտները: Սիրելի՛ հայրենակիցներ, եւս մեկ անգամ շնորհավորում են Անկախության օրվա առթիվ, մարթուն են խաղաղություն, բարօրություն եւ նորանոր ձեռքբերումներ՝ մեր եւ մեր զավակների համար խաղաղ ու ապահով կյանք կերտելու նվիրական գործում:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՆՇԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Սեպտեմբերի 21-ին, Վրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում, նշվեց Հայաստանի անկախության 25-րդ տարեդարձը: Միջոցառմանը ներկա էին հասարակայնության ներկայացուցիչներ, հոգեւորականներ, մտավորականներ: Այստեղ էին նաեւ Վրաստանում Հայաստանի դեսպանության դիվանագետները:

Արարողությունը սկսվեց Ներսես Ծնորհալի երգչախմբի կողմից Հայաստանի պետական օրհներգի կատարմամբ:

Միջոցառմանը ելույթ ունեցան Վրաստանում Հայաստանի դեսպանության ռազմական կցորդ, գնդապետ Սամվել

Ռամազյանը, Վրաստանի հայ մտավորականների միության նախագահ Ենոք Թադեոսյանը, Վրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը:

Միջոցառմանը ցուցադրվեցին դրվագներ՝ Հայաստանի անկախության

25-րդ տարեդարձին նվիրված երեւանում, Հանրապետության հրապարակում կայացած շքեղաշուք զորահանդեսից:

Տոնական միջոցառմանը կայացավ համերգ:

Հայաստանի անկախության 25-րդ տարեդարձին նվիրված միջոցառումներ անցկացվեցին նաեւ Բաթումիում, Ախալքալաքիում, Նինոծմինդայում, Ախալցխիսում, Ծալկայում, Վրաստանի հայաբնակ մյուս բնակավայրերում:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԵՐԿՐԻ ՈՂՋ ՄԱՍՇՏԱԲՈՎ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԸ ԿԱՊՈՂ ՏՐԱՆՄՊՈՐՏԱՅԻՆ ՑԱՆՑ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նախագիծը նախատեսում է նաեւ խնայողական հավասարակշռված եւ կայուն ծրագրավորում, ինտեգրացում ու տրանսպորտի տարածքային զարգացում, շինարարության, էներգետիկայի, զբոսաշրջության, արտադրությունների միջտարածաշրջանային հաղորդակցության բարելավում:

Ինչպես նշվեց շնորհանդեսին, ճիշտ ծրագրավորումը կնպաստի տարածաշրջանների հավասարաչափ տնտեսական զարգացմանն ու երկրում առկա ներուժի լիարժեք իրացմանը:


Վրաստանի մասշտաբով, ծրագրվում է նախագծել եւ կարգավորել երկ-

րի տարածաշրջանները միացնող տրանսպորտային ցանցը: Ընդհանուր առմամբ, 2020 թվականի համար նախատեսված է շուրջ հազար կիլոմետր երկարության ճանապարհների շինարարություն եւ վերանորոգում: Դրա համար ծրագրվում է ծախսել 3,5 միլիարդ դոլար: Ծրագրվում է նաեւ 550 կմ ճանապարհի շինարարություն, 800 կմ ճանապարհի վերանորոգում, 300 կամուրջների եւ անցումների ու ավտոմոբիլային 50 թունելների վերանորոգում:

Ինչպես հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին, այդ ծրագրի իրականացմամբ, կարելի է ասել, մենք՝ մեկ



դարի առաջընթացով, ապագա սերունդների համար պատրաստում ենք ենթակառուցվածք:



ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԲԱՅՎԵՑ ԱՎԱՏՐԻԱՅԻ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆ

Սեպտեմբերի 22-ին, Վրաստանի մայրաքաղաքում, բացվեց Ավստրիայի դեսպանատունը: Բացման արարողությանը ներկա էին պաշտոնական այցով ժամանած Ավստրիայի ԱԳ նախարարության գլխավոր քարտուղար, դեսպան Սիլվաբյել Լինհարթը, ինչպես նաեւ Վրաստանի ԱԳ նախարարության ներկայացուցիչներ:

Այցի շրջանակներում, Լինհարթը երկկողմ համոզիչումներ կանցկացնի Վրաստանի արտգործնախարարության, ընդդիմության եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, կայցելի վրաց-հարավօսական սահման:

Ավստրիայի դիվանագիտական առաքելության ղեկավար կղառնա Վրաստանում երկրի դեսպան Արադ Բենքը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐՄԱՆԱԴԱՐ ԵՐԿՈՒ ՆԱՎ՝ ՎՐԱՍԱՆԻՆ



ԱՄՆ-ի կառավարությունը երկու սահմանապահ նավ կնվիրի Վրաստանի սահմանապահ ոստիկանության առափնյա պահպանության ծառայությանը:

Վիրակության այցն ԱՄՆ: Այդ այցի շրջանակներում, Բալթիմորում կկայանա ԱՄՆ-ի կառավարության կողմից Վրաստանի սահմանապահ ոստիկանության առափնյա պահպանության ծառայությանը Island դասի երկու սահմանապահ նավերի հանձնման արարողությունը»,- նշվում է փաստաթղթում:

1990-ական թվականների վերջից, ԱՄՆ-ը Վրաստանին կանոնավոր տեխնիկական, ֆինանսական եւ այլ օգնություն է ցուցաբերում ծովային սահման-

ների պաշտպանության եւ երկրում օրինականության ամրապնդման, կադրերի պատրաստման, ենթակառուցվածքի ստեղծման, առափնյա պահպանության ծառայության տեխնիկական հանդերձման գործում: 2014 թվականին մերձսեծովյան Սուփսա ավանում գործարկվել է ծովային գործողությունների կառավարման կենտրոնը, որի կառուցումը ֆինանսավորվել էր ԱՄՆ-ի կառավարության կողմից: Կենտրոնի գլխավոր խնդիրը «անօրինական գործողությունների բացահայտումն ու վերացումն է Վրաստանի ծովային տարածքում»:

Այդ մասին հայտնեց Վրաստանի ՆԳ նախարարությունը՝ ամփոփելով ՆԳ նախարար Գիորգի Մղեբրիշվիլու եւ Վրաստանում ԱՄՆ-ի դեսպան Յան Քելիի միջեւ կայացած հանդիպման արդյունքները:

«Սեպտեմբերի 30-ին տեղի կունենա Վրաստանի ՆԳ նախարարության պատ-

յությանը Island դասի երկու սահմանապահ նավերի հանձնման արարողությունը»,- նշվում է փաստաթղթում:

1990-ական թվականների վերջից, ԱՄՆ-ը Վրաստանին կանոնավոր տեխնիկական, ֆինանսական եւ այլ օգնություն է ցուցաբերում ծովային սահման-

ԿՐԹԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԿՂԱՌՆԱ 800 ԼԱՐԻ

Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան, հաջորդ տարվանից ուսուցիչների միջին աշխատավարձը կլինի 800 լարի:

Նրա խոսքերով, առաջատար եւ առաջադեմ ուսուցիչները կստանան 1000-1200 լարի, ինչը զգալիորեն կբարձրացնի նրանց մասնագիտական հեղինակությունը:

«Վերջին մի քանի տարիների ընթացքում, ուսուցիչների աշխատավարձը մի քանի անգամ բարձրացվել է: Բազային աշխատավարձը 250-ից արդեն հասցվել է 500 լարիի, իսկ հաջորդ տարվա սկզբին՝ հունվար-փետրվարին, այն կբարձ-

րացվի մինչեւ հաջորդ նշագիծը: Բազային աշխատավարձի ավելացմանը զուգընթաց, ունենք ուսուցիչների մասնագիտական զարգացման սխեման, որը թույլ կտա է՛լ ավելի բարձրացնել նրանց աշխատանքի վարձատրությունը: Մենք հպարտանում ենք նրանով, որ, մեր կառավարության օրոք, հաջորդ տարվանից ուսուցիչների միջին աշխատավարձը կկազմի 800 լարի, իսկ առաջատար եւ առաջադեմ ուսուցիչներինը՝ 1000-1200

լարի, ինչը կարելի է այդ մասնագիտության հեղինակության բարձրացման ուղղությամբ»,- հայտարարեց Ալեքսանդր Ջեջելավան:



Millenium Challenge ՆԱԽԱԳԾՈՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵՑ 12 ԴՊՐՈՑ

«Հազարամյակի մարտահրավեր» (Millenium Challenge) հիմնադրամի նախագծի շրջանակներում, Վրաստանում ավարտվեց 12 պետական դպրոցների վերանորոգումը:

Նշենք, որ նախագծի առաջին մասը ներառում էր պետական հանրակրթական 30 դպրոցի վերանորոգում Սամցխե-Ջավախեթի, Սցխեթա-Թիանեթի եւ Շիդա Բարթլիի տարածաշրջաններում: Ընդհանուր առմամբ, Վրաստանի մասշտաբով երկրի տարբեր տարածաշրջաններում պետք է վերանորոգվի 100 դպրոց: Գործընթացը կշարունակվի այնքան, որքան կպահանջվի Վրաստանի բոլոր դպրոցները ար-

դի չափորոշիչներին համապատասխանեցնելու գործընթացի ապահովման համար:

Նախագիծը ֆինանսավորում է Millenium Challenge Corporation (MCC) 140 միլիոն դոլարի ընդհանուր գումարով, ըստ պայմանավորվածության, որը ձեւակերպվել է Վրաստանի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների միջեւ: Նախագիծն իրականացվում է «Վրաստանի» եւ կրթության նախարարության համագործակցությամբ:

ԴԱՏԱԿԱՆ

ՎԱՆՈ ՄԵՐԱԲԻՇՎԻԼԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ ԵՎ ՎԵՑ ՏԱՐՎԱ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

Սեպտեմբերի 22-ին, Թբիլիսիի քաղաքային դատարանը Վրաստանի ներքին գործերի նախկին նախարար եւ երկրի նախկին վարչապետ Վանո Մերաբիշվիլուն մեղավոր է ճանաչել 2005 թվականին խորհրդարանի պատգամավոր Վալերի Գելաշվիլուն ծեծելու գործով եւ նրան դատապարտել վեց տարի եւ ինն ամսվա ազատազրկման:

Հիշեցնենք, որ այժմ Մերաբիշվիլին 4,5 տարի բանտային պատիժ է կրում ծառայողական լիազորությունները գերազանցելու համար, 2011 թվականի մայիսին ընդդիմության հանրահավաքը ցրելու գործով:

Պատգամավոր Գելաշվիլուն ծեծելու գործով անցնում է նաեւ Վրաստանի նախկին նախագահ, այժմ Ուկրաինայի Օդեսայի մարզի վարչակազմի ղեկավար Միխեյլ Սաակաշվիլին: Նրա գործը քննվում է առանձին:

ՄԵԾԱՄԱՄԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ 83 ՏՈԿՈՍԸ ՏՂԱՄԱՐԴ Է, 17 ՏՈԿՈՍԸ՝ ԿԻՆ

Միացյալ Նահանգների ազգային ժողովրդավարական ինստիտուտը ուսումնասիրել է Վրաստանում խորհրդարանական ընտրությունների սուբյեկտների կազմը: Կազմակերպության տվյալներով, սկսած 2014 թվականից, հարցման ենթարկվածների 70 տոկոսը գտնում էր, որ խորհրդարանի կազմում առնվազն 30 տոկոսը պետք է լինի կին:

2016 թվականի ընտրություններում մեծամասնական թեկնածուների 83 տոկոսը տղամարդիկ են, 17 տոկոսը՝ կին, իսկ կուսակցական ընտրացուցակներում այդ թվերը, համապատասխանաբար, կազմում են 63 եւ 37 տոկոս:


Ներկայիս գումարման խորհրդարանի 150 անդամներից 18-ն է կին: 2012 թվականից հետո, մեծամասնական կին թեկնածուների թիվը աննշան ավելացել է:

Ազգային ժողովրդավարական ինստիտուտի հարցման արդյունքներով, հարցման ենթարկվածների 74 տոկոսը գտնում է, որ ընտրական պաշտոններում տղամարդիկ եւ կանայք աշխատում են միանման, առանձին դեպքերում՝ կանայք գերազանցում են տղամարդկանց:

Սահմանված նորմի համաձայն, կուսակցությունը կամ դաշինքը, որի ցուցակի յուրաքանչյուր տասը թեկնածուի թվում առնվազն երեքը կին է, ստանում է 30 տոկոսի լրացուցիչ ֆինանսավորում: Ներկա դրությամբ, 25 կուսակցություններից եւ ընտրադաշինքներից այդ պահանջին համապատասխանում է միայն չորս սուբյեկտ:

ՎԱԽՆԱՎԵԼ Է ԱՇԽԱՐՀԱՐՉԱԿ ՔԱՂԱՎԱԳՈՐԾ ՄԵՐԱՔ ԲԵՐՁԵՆԻՇՎԻԼԻՆ

Սեպտեմբերի 18-ին, 87 տարեկան հասակում, վախճանվեց ճանաչված քանդակագործ, գեղանկարիչ եւ գրաֆիկ Մերաք Բերձենիշվիլին:



Նա հայտնի է որպես մայրաքաղաքում Գիորգի Սաակաձեի, Ալեքսանդր Գրիբոյեդովի եւ Դավիթ Գուրամիշվիլու հուշարձանների, ինչպես նաեւ՝ Թբիլիսիի ֆիլհարմոնիայի մոտ կանգնեցված «Մուսայի» դեկորատիվ կոթողի հեղինակ:

Մերաք Բերձենիշվիլին արժանացել է ԽՍՀՄ ժողովրդական նկարչի, Վրացական ԽՍՀ ժողովրդական նկարչի, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկրի կոչման: Նա աշխատել է նաեւ գրաֆիկայի եւ գեղանկարչության ոլորտում, ձեւակերպել է գրքեր, թատերական զովագրեր:

ՊԱՏՊԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵՎԱԾՈՒՆ

ԳԵՂԵՎԱՆ ՓՈՓՈՒՍԱԶԵ. «ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՆԵՄ, ՈՐ ՄԵՐ ՀԱՅԵՐԸ ԻՐԵՆՑ ԶԳԱՆ ԱՅՍ ԵՐԿՐԻ ԼԻԱՐԺԵՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ»

«Վրացական երազանքը» Գեղեւան Փոփխաձեին վստահություն հայտնեց 2016 թվականի խորհրդարանական ընտրություններում եւ նրա վրա պատասխանատվություն դրեց՝ ներկայացնելով որպես Բորժոմիի, Ասպինձայի եւ Ախալքալաքի մունիցիպալիտետից 17 գյուղերն ընդգրկող ընտրատարածքի մեծամասնական պատգամավորության թեկնածու: Հաղթանակի հույս ունի, քանի որ վերջին չորս տարիները համարում է հաջող եւ հավատում, որ մարդիկ լավ գիտակցում են՝ հիմա արագ զարգացման ժամանակաշրջանն է: Մեծամասնական թեկնածուն արտակարգ ներկայացման կարիք չունի, առավել եւս Բորժոմիում, որտեղ եղել է նաեւ սակրեբուլոյի նախագահ: Դպրոցն էլ այնտեղ է ավարտել եւ դեռ դպրոցի աշակերտ Փոփխաձեն Ազգայնական-ժողովրդավարական կուսակցություն հիմնեց միայն նրա համար (եւ դրանում ընդգրկեց իր համադասարանցիներին), որ կոմերիտական չդառնա: Սույն փաստը վկայում է, որ նա ունի համարձակ եւ ճիշտ որոշումներ ընդունելու ունակություն եւ միշտ կարողանում է ելք գտնել ստեղծված իրավիճակից: Ընտրություններում հաղթելուց հետո, Գեղեւան Փոփխաձեն ելք է որոնելու այն հիմնախնդիրների կարգավորման համար, որոնք անհանգստացնում են Բորժոմիի, Ասպինձայի եւ Ախալքալաքի 17 գյուղերի բնակիչներին:

- Բառոնո Գեղեւան, Ձեր կարծիքով, 2012 թվականի ընտրություններում հաղթանակից հետո, ինչպես խոստացել էիք ընտրողներին, Բորժոմիում սկսվե՞ց նոր ապրելաձեւ:

- Ազգայնականների իշխանության օրոք՝ ընդդիմությունում էի: Համախոհների հետ միասին պայքարում էի, որ հասարակությունն ունենա տարրական ազատություն, եւ քանի որ դրան հասա, նշանակում է, որ Վրաստանում նոր կյանք, ընդհանուր առմամբ, սկսվել է: Գտնում եմ, որ իրավիճակն արմատականորեն փոխվեց նաեւ Բորժոմիում, որը ազգայնականների համար միայն անձնական եկամտի աղբյուր էր: Կան նաեւ «անձեռնմխելի» փոփոխություններ: Օրինակ, Բորժոմիի բյուջեն այսօր ռեկորդային է, եւ մեծ ռեսուրս ունենք մյուս ուղղություններով եւս առաջադիմելու: Այսօր բացառված է, որ որեւէ բորժոմցի գա մունիցիպալիտետ, խնդրի վերահատույթան համար ֆինանսավորում եւ այն չստանա: Օրենքի շրջանակներում, օգնում ենք բոլորին: Միաժամանակ, իրականացվում են շատ ենթակառուցային նախագծեր:

- 2016 թվականի ընտրություններին Դուք պայքարելու եք նաեւ Ասպինձայից ու Ախալքալաքից մունիցիպալիտետի 17 գյուղերի ընտրողների անունից պատգամավորական մանդատ ստանալու համար: Վերջին չորս տարիների ընթացքում ի՞նչ է արվել այդ տարածքներում:

- Իրականացվեց ոչ միայն Ասպինձա-Ախալքալաքի, այլեւ ողջ Վրաստանի համար ամենանշանակալի ենթագետիկական նախագիծը՝ 87 մեգավատտ հզորության «Փարվանա-ԴԷԿ»-ը: Ներդրումների ծավալը կազմեց 185 միլիոն ԱՄՆ դոլար, նաեւ ընթացքի մեջ է Ասպինձա-Ախալքալաքի ՔուռԴԷԿ-ի շինարարությունը, որի ներդրումային արժեքը կազմում է 120 միլիոն դոլար: Ասպինձայի եւ Ախալքալաքի մունիցիպալիտետներում անցկացվեցին ճանապարհային ենթակառուցվածքի մասշտաբային աշխատանքներ, իրականացվեցին գյուղատնտեսական, առողջապահական եւ սոցիալական նախագծեր: Ողջ Վրաստանի համար արտակարգ նշանակալից է, որ ընթացքի մեջ է Վարձիայի բացառիկ ժայռավոր քաղաքի վերականգնման 4-ամյա ծրագիրը:

- Այդ մունիցիպալիտետների ընտրողների համար, Ձեր կարծիքով, հանդիսանում էք, արդյոք, ցանկալի թեկնածու, եւ ո՞ր չափորոշիչներից ելնելով են քվեարկելու Ձեր օգտին:

- Նրանք հնարավորություն ունեն աջակցելու այնպիսի իրավապաշտպանի, ինչպիսին անհրաժեշտ է: Եթե համատեղ փորձենք, ապա միասին կկարողանանք հաղթահարել տարածաշրջանում առկա հիմնախնդիրները եւ դրան անպայման կհասնենք: Մենք շատ բան կարող



Ծնվել է 1975 թվականի մարտի 11-ին: Ավարտել է Թբիլիսիի Իվանե Զավախիշվիլու անվան պետական համալսարանի իրավաբանության ֆակուլտետը: 2001-2002 թթ. եղել է Վրաստանի արդարադատության խորհրդի խորհրդատու, 2002-2003-ին՝ Բորժոմիի սակրեբուլոյի նախագահ, 2003-2005 թթ. դարձել է Բորժոմիի մունիցիպալիտետի նախագահ, իսկ 2006-2008-ին՝ Բորժոմիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի անդամ: 2008-2011 թթ., որպես իրավաբան, աշխատել է «Ատորնե» ԿԸ-ում: 2012 թվականից Բորժոմիից մեծամասնական պատգամավոր է, մարդու իրավունքների պաշտանության եւ քաղաքացիական ինտեգրման խորհրդարանական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ եւ իրավաբանական հարցերով կոմիտեի անդամ:

ենք անել, միմյանց սովորեցնել: Ասպինձացիներն ու Ախալքալաքի 17 գյուղերի բնակիչները, հանձինս ինձ, կունենան մեծամասնականի, որը կպաշտպանի իրենց իրավունքները, նրանք կդառնան այն քաղաքական հարթակի մի մասը, որտեղ մարդու իրավունքները պաշտպանված են, որտեղ մարդիկ ուշադրության են արժանանում: Ստադիոն եւ պաշտպանել բոլորի իրավունքները, այդ թվում, ինչ խոսք իմ հայ եղբայրների: Հարկավոր է օրենք սահմանել այն մունիցիպալիտետներում, որտեղ ապ-

րում են ազգային փոքրամասնություններ, քաղաքական ինտեգրման համար ստեղծել լավագույն պայմաններ: Ամեն ինչ անելու ենք, որ նրանք իրենց զգան այս երկրի լիարժեք քաղաքացիներ, զգան, որ անմիջականորեն կապ ունեն կենտրոնական իշխանության հետ եւ դրա համար միջնորդ օղակի կարիք չկա: Թե՛ Ախալքալաքին եւ թե՛ Ասպինձան նախորդ գումարման խորհրդարանում ընդդիմադիր թեկնածու ունեին, եւ չեմ կարծում, որ դրանից ինչ-որ բան շահեցին: Գերադասելի է ունենալ կառավարող թիմի ներկայացուցիչ, որն անմիջականորեն կապահովի նրանց հիմնախնդիրները կենտրոնական իշխանությանը հասցնելու գործը:

- Այսինքն, ընտրողներին հասցեագրված գլխավոր ուղերձը սա է, եւ հաղթանակի հո՞ւյս ունեք:

- Կարծում եմ, գլխավորն այն է, որ մարդիկ հույսի զգացում ունեն: Շատ քաղաքական ուժեր են աշխատում, որպեսզի հասարակությունում արմատավորվի հուսախաբությունը: Իսկ «Վրացական երազանքը» չորս տարվա ընթացքում, իրոք, շատ բան արեց, ինչը հույս է ներշնչում վերջ դրվեց ահաբեկչությանը, մարդու իրավունքների համատարած խախտմանը: Սկսվեց հասարակության միավորումը: Իրականում սկսվեց քաղաքական այնպիսի գործընթաց, որը անվտանգության տեսակետից էլ նշանակալից է: Տարածաշրջանում, մեր շրջապատում կռիվներ ու լարվածություն է, իսկ Վրաստանում մնան ոչինչ չի զգացվում: Ընդհակառակը, մեր քաղաքացիների մոտ ծագեց անվտանգության զգացում, չենք լարում արտաքին հարաբերությունները եւ չենք ձգտում վեկտորների այնպիսի տեղաշարժի, որ Վրաստանը դառնա դիմակայության գոտի:

Աշխատում ենք հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ, եւ հասարակությունը սահմանափակում չունի, եթե որեւէ բան դուր չի գալիս, արտահայտում է իր կարծիքը ու բողոքում:

Եթե «Վրացական երազանքը» կրկին մանդատ ստանա, ապա առաջիկա չորս տարիներին կկողմնորոշվի դեպի էկոնոմիկայի զարգացում, կոնկրետ հիմնախնդիրների լուծում: Դրա վկայությունը մեր վարչապետն է, նրա անձնական հատկությունները, մասնագիտական ունակությունները...

Կարծում եմ, որ թիմի լիդերը նշանակալիորեն սահմանում է թիմի տրամադրվածությունը, եւ Կվիրիկաշվիլին, իրոք, կողմնորոշված է աշխատանքի, գործ անելու եւ երկրի տնտեսական զարգացման ուղղությամբ: Ներքին հավատ ունեմ, որ բնակչությունը չի կորցնի լավագույն վաղվա օրվա հնարավորությունը: Իրականությունն այն է, որ այսօր Վրաստանը, «Վրացական երազանքից» բացի, այլընտրանք չունի:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՐԿԱՏՈՒՄԵՐԸ ԿԱԶԱՏՎԵՆ ՊԱՐՏՔԵՐԻՑ

Առանձին կատեգորիաների հարկատուները կազատվեն հարկային պարտքերից: Այդ մասին ասված է եկամուտների ծառայության կողմից տարածված տեղեկատվության մեջ:

Վրաստանի հարկային օրենսգրքում կատարած փոփոխությունների արդյունքում (իրապարակվել է 2016 թվականի հունիսի 1-ին)՝ 309-րդ հոդվածի 37-րդ բաժնի ա) եւ բ) ենթակետերը ձեւակերպվեցին նոր խմբագրությամբ, եւ դրանց համաձայն մարման են ենթակա:

ա) Մինչեւ 2011 թվականի հունվարի 1-ը ծագած եւ մինչեւ սույն ենթակետի գործարկումը չվճարված հարկային պարտքի գումարը, եթե անձը մինչեւ գումարի մարումը ակտիվություն չի ցուցաբերել, չի ներկայացրել հարկային հռչակագիր-հաշվառում (բացառությամբ՝ գույքահարկի հռչակագրի) կամ հարկային մարմնին ներկայացրած հարկային հռչակագիր-հաշվառման հիման վրա չի վավերացվել միանշանակ եկամուտ:

բ) Մինչեւ 2013 թվականի 1-ը ծագած, ընդունված հարկային պարտքին ավելացված հավելավճարը եւ մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը հաշվառված, ընդունված տուգանքը, ընդունված հարկի գումարի վճարման պայմանով, եթե անձը մինչեւ գումարի մարումը ակտիվություն չի ցուցաբերել, չի ներկայացրել հարկային հռչակագիր-հաշվառում (բացառությամբ՝ գույքահարկի հռչակագրի) կամ հարկային մարմնին ներկայացրած հարկային հռչակագիր-հաշվառման հիման վրա չի վավերացվել միանշանակ եկամուտ:

գ) Գանձարկղային հաշվիչ սարքի օգտագործման կարգի խախտման համար, ֆիզիկական անձանց մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը սահմանված հաշվառված եւ մինչեւ սույն նորմի գործարկումը չվճարված գումարը (գ)

հատվածը մնում է անփոփոխ):

Փոփոխությունները գործարկվեցին 2016 թվականի հունիսի 2-ից մինչեւ ընթացիկ տարվա սեպտեմբերի 21-ը: Հարկային օրենսգրքի 309-րդ հոդվածի 37-րդ բաժնի համաձայն, 24546 հարկատուի հարկային պարտքը, ընդհանուր առմամբ, 1013179986,00 լարիի չափով մարվել է, այդ թվում՝ ա) բաժնով 24318 հարկատուին՝ 1012477408,80 լարիի չափով, բ) բաժնով 218 հարկատուին՝ 697885,80 լարիի չափով, գ) բաժնով 10 հարկատուին՝ 4691,40 լարիի չափով:

Ինչպես ներկայացված է տեղեկատվությունում, եկամուտների ծառայությունը հարկային պարտքերի մարումը իրականացնում է ինչպես սեփական նախաձեռնությամբ (ՎՅՕ, 309-րդ հոդված, 37-րդ բաժնի, ա) եւ գ) ենթակետերով նախատեսված դեպքերում, այնպես էլ՝ հարկատուների դիմումի դեպքում): Պարտքերի մարման գործընթացը շարունակվում է:

«ԲԱՑ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԵՏ» ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ-ՖՈՐՈՒՄԸ

Սեպտեմբերի 16-ին, «Միլենիում Բիլտմորի» հյուրանոցում, անցկացվեց Վրաստանի առևտրաարդյունաբերական պալատի առաջնահերթային «Բաց երկխոսություն բիզնեսի հետ» տարածաշրջանային բիզնես-ֆորումը:



Հանդիպմանը, որն անցկացվեց երկխոսության կարգով, ներկայացրան Վրաստանի ֆինանսների նախարարի առաջին տեղակալ, եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլին եւ ծառայության մյուս ներկայացուցիչները: Ֆորումի շրջանակներում, ներկայացվեցին եկամուտների ծառայության սպասարկումներն ու նորամուտությունները: Հանդիպման մասնակիցների համար Վախթանգ Լաշքարաձեն նաեւ անցկացրեց եկամուտների ծառայության վերաբերյալ նյութերի շնորհանդեսը:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ